

ՎԱՆՔԱՍԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ»  
Կիրակոսյան Լ. (ԵՊՀ, Հայաստան)  
[kirakosyanlyuba@gmail.com](mailto:kirakosyanlyuba@gmail.com)

Բանալի բառեր՝ պատմաճարտարապետական ժառանգություն, հուշարձան, հատակագծային և ծավալատարածական հորինվածք, վերականգնում, քիվ, գմբեթարդ:

Արցախյան շարժումից առաջ հայագիտությունը զրկված էր Արցախում մշակութային հետազոտություններ կատարելու հնարավորությունից: Այսօր ազատագրված տարածքներում լիակատար հիմքեր կան Արցախի հին և միջնադարյան մշակույթի ուսումնասիրության և պահպանության համար: Վերջին տարիներին այստեղ կատարված հետազոտությունների արդյունքում ոչ միայն համալրվել է հայկական պատմաճարտարապետական ժառանգությունը, այլև շատ համալիրներ ներկայանում են նոր մեկնաբանությամբ: Այս շարքում է Վանքասարի վաղքրիստոնեական եկեղեցին:

Վանքասարի եկեղեցին առաջին անգամ ներկայացրել է Զ. Յամպոլսկին և, տուրք տալով հայկական հուշարձաններն աղվանական համարելու ադրբեջանական գիտնականների մտայնությանը, հուշարձանը համարում է «աղվանական»: Հուշարձանի մյուս հետազոտողները (Մ. Հասրաթյան, Վ. Գրիգորյան, Շ. Մկրտչյան, Ս. Կարապետյան, Հ. Սիմոնյան - Հ. Սանամյան), հերքելով այս տեսակետը, այնուամենայնիվ, հպանցիկ են անդրադարձել եկեղեցուն: Այսօր հնարավոր է դարձել հուշարձանի տեղազննումներ և մանրամասն չափագրություններ կատարել և ներկայացնել Վանքասարի եկեղեցու հատակագծային և ծավալատարածական հորինվածքի ամբողջական պատկերը և հասկանալ ադրբեջանական «վերականգնման» էությունը:

Եկեղեցին ունի խաչածև հատակագծային հորինվածք և պատկանում է վաղմիջնադարյան փոքր խաչածև կենտրոնագմբեթ եկեղեցիների եռախորան տիպին: Հորինվածքի հիմքը կազմող գմբեթատակ քառակուսին ամփոփված է արևմուտքից ուղղանկյուն, իսկ մյուս կողմերից՝ կիսաշրջանածև խաչաթևերով, որոնք արտաքինից ուղղանկյուն են: Մուտքերը բացված են երեք կողմերի (արևելյանից բացի) խաչաթևերում, ուր զետեղված են նաև մեկական լուսամուտներ: Եկեղեցու՝ Զ. Յամպուլսկու ուսումնասիրության ժամանակ դեռևս պահպանված վարպետների նշանագրերը համընկնում են Սիսիանի VII դ. Սբ Հովհաննես եկեղեցու նշանագրերի հետ:

Վանքասարի եկեղեցին 1980-ականներին «ադրբեջանական ձևով վերականգնման» ժամանակ լուրջ կորուստներ է կրել: Առաջին հերթին խաթարվել է հուշարձանի բնական միջավայրը և լանդշաֆտը: Ամբողջովին բարձրացվել է և սալապատվել եկեղեցու շրջակայքը: Արդյունքում այն այժմ կանգնած է «ամայի» մի հարթակի վրա, որն ամբողջովին ծածկել է ժամանակին եկեղեցու շուրջը սփռված վաղմիջնադարյան շինարարական մնացորդները: Այլափոխվել են նաև կոնստրուկտիվ հանգույցների (բացվածքներ, քիվեր, տրոմպներ, գմբեթարդներ, ծածկեր) իրականացման եղանակները: Կառույցի արտաքին տեսքն ու համաչափական համակարգը նույնպես տուժել են «նորոգումներից»: Վանքասարի եկեղեցու ոճական և շինարարական առանձնահատկությունների հետ առնչվող վաղմիջնադարյան բոլոր հուշարձանները կառուցված են այլ կերպ: Այսպիսի ձևով վերականգնումը ոչ թե չիմացություն, այլ դիտավորություն է հետապնդել: Միտումնավոր ոչնչացվել է նաև արևմտյան մուտքի բարավորի խաչաքանդակը: Եկեղեցին այսօր կանգնած է որպես վերականգնման անվան տակ իրականացված մշակութային յուրօրինակ վանդալիզմի դրսևորում:

Վանքասարի եկեղեցին տուժել էր նաև արցախյան պատերազմից: Արևմտյան ճակատում՝ բարավորից վերև, արկը բավական մեծ խոռոչ էր բացել, որը սպառնում էր պատի

կայունությանը: 2011 թ. աշնանը ԼՂՀ Ձբոսաշրջության վարչությունը մաքրման, ամրակայման և բարեկարգման աշխատանքներ է իրականացրել այստեղ: Մասնակի ամրակայման աշխատանքներն ավարտվել են 2012 թ. հունվարին, և եկեղեցու գմբեթին տեղադրվել է խաչը:

Փաստական կռվանների, համեմատական (Քարաշամբի, Այլաբերի, Թալինի Սբ Աստվածածին եռախորան եկեղեցիներ) նյութերի, տարածաշրջանի վաղմիջնադարյան հարուստ մշակութային շերտի և ճարտարապետական համալիրների համադրության արդյունքում հնարավոր է վերակազմել Վանքասարի եկեղեցու նախնական տեսքն ու միջավայրը և բացահայտել աղվանական-ադրբեջանական կապի և ընդհանրության «տեսության» և հայ ժողովրդի արցախյան հատվածի ստեղծած նյութական մշակույթի հուշարձաններն աղվանական համարելու վարկածի ողջ սնանկությունը և հետազոտությունների միջոցով հակահարված տալ ադրբեջանական հարձակումներին:

THE ARCHITECTURE OF VANQASAR CHURCH AND AZERBAIJANIAN  
“RECONSTRUCTION”

Kirakosyan L. (Yerevan State University, Armenia)